«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ռոզա Մայիլյան

Ուսումնական հաստատություն՝ Ղուկասավանի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն ……. 2

Գլուխ 1 ……. 5

Օզոնային շերտի պահպանությունը …….. 6

Կլիմայի փոփոխություն ……..... 7

Կենսաբազմազանություն ……. 8

Ջուրը ……. 8

Գլուխ 2 ……. 10

Սևանա լճի հիմնահարցը ……... 12

Անտառահատում …… 13

Կենդանական և բուսական աշխարհի ոչնչացումը …… 15

Ավտոտրանսպորտի վնասակար արտանետումները ……. 15

Եզրակացություն ……. 16

Գրականության ցանկ …… 18

Ներածություն

Համամոլորակային հիմնախնդիրներ կամ **Գլոբալ խնդիրներ՝** արդիականության համամարդկային խնդիրներ, որոնք շոշափում են ներկա և ապագա սերունդների կենսական շահերը, և որոնց լուծումը պահանջում է բազմաթիվ պետությունների համատեղ ջանքերը:

Այդ խնդիրներից կարևորներն են մեր մոլորակի բնակչության ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխությունը, շրջակա միջավայրի աղտոտումը, միջազգային ահաբեկչության ու թմրամոլության լայն տարածումը: Մեր օրերում դրանց ավելացավ նաև 2008 թվականից սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական խոր ճգնաժամը: Այդպիսի խնդիրներն անվանում են գլոբալ հիմնախնդիրներ:

Նրանց լուծումը հնարավոր է միայն բոլոր երկրների (ինչպես զարգացած և հարուստ, այնպես էլ թույլ զարգացած և աղքատ) համատեղ և նպատակասլաց ջանքերի շնորհիվ:

Գլոբալ խնդիրների օրինաչափ արդյունք են հիմնականում գիտատեխնիկական և տնտեսական առաջընթացի շեշտակի արագացման, մարդու վերափոխիչ գործունեության ընդլայնման և որակական փոփոխության, սոցիալական հակասությունների խորացման: Գլոբալ խնդիրների կարևորության համընդհանուր գիտակցումը ենթադրում է համապատասխան փիլիսոփայական իմաստավորում, մասնավորապես մարդկության միասնության, մարդու պատասխանատվության, բնության հետ հասարակության ներդաշնակության անհրաժեշտության ըմբռնում:

Ժամանակակից աշխարհում համամոլորակային հիմնախնդիրների առաջացման համար կան օբյեկտիվ նախադրյալներ: Դրանք այն հիմնախնդիրներն են

, որոնք առնչվում են ամբողջ մարդկության կենսական շահերին: Պատահական չէ, որ արդի դարաշրջանի համար հաճախ օգտագործվում է «համամոլորակային հիմնախնդիրների դարաշրջան» արտահայտությունը:

Համամոլորակային են այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում նրանց ներկային ու ապագային, և դրանց լուծման համար պահանջվում է բոլոր ժողովուրդների ու գործողությունների միասնությունը: Իրենց բնույթով համամոլորակային հիմնախնդիրները տարբեր են, սակայն բոլորը համակված են մարդկության աշխարհագրական միասնության և կենսակայունության գաղափարով:

Մարդկության համար առավել հրատապ են հետևյալ համամոլորակային հիմնախնդիրները.

1. Խաղաղության պահպանության հիմնախնդիրը,
2. բնապահպանական հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի խախտման հետ,
3. զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը,
4. թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը,

5. մորոլակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը,

6. նախկին գաղութների (զարգացող երկրների) հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը, որը, ցավոք, ոչ միայն չի վերանում, այլև երկրագնդի որոշ տարածաշրջաններում դրսևորվում է առավել ցայտուն,

7. համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը՝ առաջին հերթին կապված նրա կենսաբանական արդյունավետության և աղտոտման հետ,

8. տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը,

9. կլիմայի փոփոխության հիմնախնդիրը:

Մեր մոլորակը իր պատմության ընթացքում երբևէ չի բախվել այնպիսի հիմնախնդիրների, որոնք կան մեր օրերում: Արդեն գոյություն ունեն մարդկության բնակության տարածքի բիոպահպանական հատկությունների անվերադարձ փոփոխության, ձևավորվող համաշխարհային հասարակայնության միասնականության խախտման և քաղաքակրթության ինքնաոչնչացման սպառնալիքները:

Համամոլորակային հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել արտադրողական ուժերի զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու միտումները (այդ թվում՝ ԳՏՀ ազդեցությունը), սոցիալական գործոնների դերը (մոլորակի բնակչության արագ աճը, պետությունների փոխազդեցության մեծացումը):

Մարդկային գործունեության բոլոր ոլորտներում տեղի է ունեցել որակական մեծ թռիչք: Տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում խոշորամաշտաբ տնտեսական գործունեությունը և դրա դինամիզմն իրենց հետ բերում են ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ, այդ թվում՝

- բնական ռեսուրսների կտրուկ և ոչ միշտ արդարացված սպառումը,
- արտադրական գործունեության բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և մարդկանց կյանքի էկոլոգիական պայմանների վատթարացումը,
- արդյունաբերական զարգացած և զարգացող երկրների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափության մեծացումը,
- զանգվածային ոչնչացման զենքի ստեղծումը, որը սպառնում է մարդկային քաղաքակրթությանը:

Բոլոր գործոնները այս կամ այն չափով նպաստել են համամոլորակային հիմնախնդիրների առաջացմանը և սրմանը: Առաջնորդվելով միայն տնտեսական խնդիրներով, զարկ տալով նյութական արտադրությանը և բնությունը դիտելով միայն որպես շահագործման օբյեկտ ու արտադրության թափոնների ու կենսագործունեության վայր՝ մարդկությունը կարող է կանգնել համամոլորակային հիմնախնդիրների առջև:

Թեմայի նպատակը և խնդիրները: Մեր հետազոտության ***նպատակն է՝*** կատարել անդրադարձ բնապահպանական խնդիրներին հիմնական շեշտը դնելով բնության մեջ տեղի ունեցող դրական և բացասական երևույթների վրա: Աշխատանքի ընթացքում կարևորել ենք հետևյալ ***խնդիրները***. օզոնային շերտի պահպանությանը, կլիմայի փոփոխություններին, կենդանական աշխարհի, լճերի, ջրերի հիմնահարցերին, կենսաբազմազանության պահպանությանը և այլն:

Հետազոտման օբյեկտը և առարկան:Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը բնապահպանությունն է, որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, առարկան՝պատասխանատու և հոգատար վերաբերմունք ձևավորել բնության, շրջակա միջավայրի նկատմամբ:

Օգտագործված գրականության տեսություն:Հետազոտական աշխատանքը շարադրված է հայերեն աղբյուրների և ուսումնասիրությունների. աշխատությունների քննական հետազոտության ու վերլուծության հիման վրա:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը:Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած են գիտական նյութի հավաքման ,դասակարգման,վերլուծման մեթոդները:

Գլուխ 1.

Բնությունը փոխադարձաբար կապված կենսական և ոչ կենսական բաղադրամասերի բարդ ,ամբողջական համակարգ է ,որի մի մասն է կազմում հասարակությունը:Վերջինս չի կարող գոյություն ունենալ առանց բնության հետ մշտական կապերի, որտեղից վերցնում է օդ, ջուր, սնունդ, հումք և այդ պատճառով բնության վրա մարդու փոխակերպիչ ազդեցությունն անխուսափելի է:

Մարդը, որպես կենսաբանական տեսակ, իր ձևավորման արշալույսին բնության վրա ազդում էր այնպես, ինչպես մյուս կենդանի օրգանիզմները. Նա սնվում էր սերմերով, պտուղներով, ուտելի բույսերով , դեղատու բույսեր էր հավաքում, կենդանիների որս էր կատարում և հաճախ ինքն էր զոհ գնում գիշատիչներին: Մարդու և բնության միջև գոյություն ուներ ներդաշնակ կապ:

Մարդը, որպես կենդանի օրգանիզմ, կենսագործելով բնության մեջ, միևնույն ժամանակ ձեռք է բերում և համակարգում բնության մասին որոշակի գիտելիքներ, ստեղծում է կերպարներ, մոդելներ, կենցաղային առարկաներ և այլն:

Սակայն հետագայում,երբ սկսեց ձևավորվել մարդկային հասարակություն,մարդն,ի տարբերություն մյուս կենդանիների,աշխատանքի շնորհիվ դուրս եկավ բնական միջավայրի կենսաբանական հսկաղությունից և հնարավորություն ստացավ ընդլայնելու սեփական պահանջմունքների շրջանակը: Դրանով սկիզբ դրեց բնության վրա նրա միակողմանի ազդեցության ուժեղացումը:

Բնության վրա մարդու ներգործության ձևերն ու ծավալներն իրենց որակական և քանակական բնութագրումներով այսօր համամոլորակային նշանակություն են ձեռք բերել: Այդ առումով անհրաժեշտություն են կրթության նկատմամբ սկզբունքորեն նոր մոտոցումների առաձադրումը և կրթության բովանդակության արդիականացման համատեքստում կարևորվում է բնագիտական հոսքի առարկաների դասավանդման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում: Բնապահպանության բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրություն, կենսաբանություն, էկոլոգիա, հասարակագիտություն, տնտեսագիտություն, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի, սոցոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Անասնապահության զարգացումը բերեց նրան, որ արոտավայրերում անասունների կենտրոնացումն ուղեկցվեց բուսականության տիպի փոփոխություններով և բնական ապրելավայրերից վայրի կենդանիների դուրս մղումով :

Բնության մեջ անհամեմատ ավելի մեծ անցանկալի փոփոխություններ տեղի ունեցան , երբ մարդը սկսեց զբաղվել հողագործությամբ: Մշակովի հողատարածքների ընդլայնման համար հատվեցին և այրվեցին անտառածածկ տարածքներ , չորային շրջաններում գետերի վրա կառուցվեցին ոռոգման համակարգեր:Այս ամենի հետևանքով դարձավ գետերում ջրի մակարդակի նվազումը, հողերի էրոզիան, ինճպես էլ անխուսափելիորեն ազդեց նաև կենդանական աշխարհի վրա .զրկվելով բնական ապրելավայրից՝կենդանիների առանձին տեսակների թվաքանակը զգալիորեն կրճատվեց, իսկ որոշ տեսակներ պարզապես անհետացան:Այդ ընթացքում միջատների և կրծողների բազմաթիվ տեսակների համար տեղի ունեցած փոփոխությունները բարենպաստ էին , և դրանք սկսեցին հաջողությամբ բազմանալ ու դառնալ մծակովի բույսերի վնասատուներ:

Ոչինչ չտալով հողն՝հողագործը ձգտում էր ստանալ առավելագույն օգուտ, որն էլ բերեց հողերի կառուցվածքի քայքայմանը , դրանց աղքատացմանը և էրոզիայի:

Զանգվածային անտառահատումները փոխեցին հողերի ջրային ռեժիմը, ուժեղացան էրոզիայի գործընթացները, ի հայտ եկան ավերիչ ջրհեղեղներ , ծանծաղեցին գետերը , գրանցվեց քաղցրահամ ջրի պակաս , իսկ մի շարք տարածաշրջաններում ձևավորվեց չորային կլիմա:

Օզոնային շերտի պահպանությունը

Օզոնային շերտի քայքայումը ժամանակակից բնապահպանական հիմնախնդիրներից է: Եթե օզոնային շերտի քայքայման գործընթացը չդադարի, ապա դրա հետևանքները մարդկության համար աղետալի կլինեն:

Օզոնը թթվածնի տարրերի յուրահատուկ միացություն է, որ պարունակում է թթվածնի 3 ատոմ:Մթնոլորտում օզոնի մոլեկուլն անկայուն է. և՛տրոհվում, և՛ վերականգնվում են խիստ հավասարակշռված հարաբերություններով:Օզոնը,որն արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների ներգործության շնորհիվ առաջանում է մթնոլորտում,բաշխված է վերնոլորտում՝10-50 կմ բարձրությունների միջև և կազմում է երկրի մթնոլորտի միայն մի աննշան մասը: Եթե մթնոլորտում պարունակվող ամբողջ օզոնը նորմալ ճնշման պայմաններում բաշխենք երկրագնդի մակերեսով, ապա կստացվի շուրջ 3մմ հաստությամբ շերտ:

Երկրագնդի կյանքի համար կարևոր է օզոնային շերտը: Օզոնային շերտը փխրուն, սակայն հուսալի վահան է ուլտրամանուշակագույն ճառագայթների դեմ:Այն կլանում է վտանգավոր և որոշակի ալիք ունեցող ուլտրամանուշակագույն ճառագայթները՝ պահպանելով կյանքը երկրի վրա:Օզոնային շերտի քայքայման հետևանքով առաջանում են մի շարք հիվանդություններ:Այսպես. Երկար ժամանակ արևի տակ մնալը մաշկի

քաղցկեղով հիվանդանալու վտանգ է պարունակում:Ինչպես նաև առաջանում են աչքի հիվանդություններ,վնասվում է օրգանիզմի դիմադրողական ֆունկցիաները:

Այս վտանգից զերծ չեն նաև անտառները, մշակաբույսերը,կենդանական աշխարհը և այլն:

Կլիմայի փոփոխություն

Երկրագնդի կլիման գնալով ավելի ու ավելի մեծ չափերով է ենթարկվում մարդու ներգործությանը: Կլիմայական համակարգում՝մթնոլորտում, օվկիանոսում, ցամաքում, կրիոսֆերայում տեղի ունեցող բոլոր գործընթացները կապված են միմյանց հետ: Կլիմայական համակարգի բաղադրիչներից մեկում տեղի ունեցող փոփոխությունները կարող են փոփոխություններ առաջացնել այլ բաղադրիչներում, ընդ որում, երբեմն զգալիորեն ծանր հետևանքներով: Նման հետևանքներից մեկը, որը վերջնական արդյունքում կարող է աղետալի լինել, երկրագնդի կլիմայի տաքացումն է, այսպես կոչված ջերմոցային գազերի՝ մթնոլորտ արտանետման հետևանքով:

Բնության ներդաշնակությունը խաթարող որոշ գործընթացներ մարդու գործունեության հետևանքով, դժբախտաբար, անշրջելի են .

- կրճատվել են ձյան ծածկույթի և Երկրի ցամաքային սառույցների զանգվածն ու մակերեսները
- փոքրացել են Հյուսիսային կիսագնդի սառցադաշտերի և լողացող սառցալեռների չափերը:
- Հյուսիսային կիսագնդի ցամաքային շրջանների ամպամածությունը ավելացել է երկու տոկոսով
- որոշ վայրերում հավերժական սառցույթը դադարել է այդպիսին լինելուց. Այն սկսել է հալվել
- այն վայրերում, որտեղ անձրևը համարվել է հազվագյուտ երևույթ, այժմ նկատվում են վարարումներ: Ջրհեղեղները և երաշտները հաճախակի են դարձել: Ավելի ու ավելի է հաճախացել անտառների հրդեհվելը, որոնց դեմ հաճախ ժամանակակից տեխնիկական միջոցներով անգամ անհնար է պայքարել
- փոխվել է շատ բույսերի վեգետացիոն ժամանակաշրջանը: Բույսերի և կենդանիների շատ տեսակների բնակավայրերի սահմանները կրճատվել, ինչպես նաև տեղաշարժվել են դեպի ավելի բարձր լայնությունները
- ծովի տաքացման հետևանքով տեղի է ունենում մարջանների զունաթափում:

Բոլոր այս երևույթները համաշխարհային հանրությանը ստիպեցին գիտակցել կլիմայի փոփոխության վտանգը:

Կենսաբազմազանություն

Կենսաբազմազանությունը մեր մոլորակի վրա տարածված բուսական և կենդանական աշխարհի տեսակային քանակն է արտահայտում:

Այսօր կենսաբազմազանությունը դիտվում է որպես մարդկային կենսագոյության անհրաժեշտ նախապայման և մարդկային հասարակության զարգացման առանցքային բաղադրիչ:

Վիճակագրական տվյալներով ամեն տարի Երկրագնդի վրա վերանում է կենսաբանական 4 տեսակ: Սակայն մոտակա տասնամյակների ընթացքում, համեստ հաշվարկներով, եթե պահպանվի այդ չափանիշը, տարեկան կարող է անհետանալ մի քանի հազար տեսակ, իսկ հետագայում այդ տեմպերն ավելի կարագանան:

Կենդանիների և բույսերի անհետացմանը նպաստում է էկոհամակարգերի խախտումը, որի հիմնական պատճառներն են՝

1 Մարդկային գործոնները, որը լինում են՝ ուղղակի և անուղղակի

Ուղղակի՝ որս, ձկնորսություն, անտառահատումներ, դեղաբույսերի և վայրի սննդային բուսատեսակների հավաք:

Անուղղակի՝ արտադրական և կենցաղային թափոններ, ջրերի և մթնոլորտի աղտոտում, ավտոճանապարհների և երկաթուղու շինարարություններ, բարձր լարման էլեկտրալարերի անցկացորմ, ոռոգման համակարգի զարգացում, հանքավայրերի շահագործում, ճահիճների չորացում և գյուղատնտեսական նպատակով խամ ու խոպան հողերի մշակում և սխալ հողօգտագործում:

2 Բնածին գործոնները՝ երաշտ, ջրհեղեղ, երկրաշարժ, հրաբուխներ, հրդեհներ և այլն:

Կենսաբազմազանության վրա բացասաբար է ազդում նաև կլիմայի փոփոխությունը և անապատացումը: բուսական կամ կենդանական ամեն մի տեսակի կորուստ կարող է վճռորոշ նշանակություն ունենալ էկոհամակարգերի ամբողջականության, հավասարակշռության ապահովման, մարդկանց առողջության և մարդկության կայուն զարգացման համար: Այսպիսի նշանակությամբ է պայմանավորված այն, որ կենսաբազմազանության պահպանությունը համարվում է համամարդկային և բոլոր երկրների համար առաջնահերթ հիմնախնդիր: Այն չի սահմանափակվում առանձին երկրների սահմաններով և պահանջում է համամոլորակային մոտեցումներ և հոգատարություն:

Ջուրը

Ինչպես հայտնի է, առանց ջրի կյանք չկա: Քաղցրահամ ջուրը երկրի ցամաքի բոլոր կենդանի համակարգերի գոյության կարևորագույն բաղադրիչն է և անհրաժեշտ պայմանը:

Բոլոր այն դեպքերում, երբ գիտնականները կյանքի նշաններ են փնտրում այլ մոլորակների վրա, առաջին հերթին փորձում են պարզել՝ջուր կա՞, արդյոք, այնտեղ:

Տասնամյակներ շարունակ միջազգային ջրերը համարվել են ամենատարբեր թափոնները լցնելու համար հարմար տեղ: Մարդն համարում էր, որ օվկիանոսները և ջրային համակարգերը ընդունակ են իրենց մեջ լուծել և կլանել այն ամենը, ինչ ընկնի այնտեղ. Անփութորեն, թե միտումնավոր: Մարդը նաև կարծում էր, որ ձկնային պաշարներն անսպառ են: Անգամ ճահճային տարածքները հաճախ դիտվում էին որպես արդյունաբերական նշանակություն չունեցող հողեր, որոնք պետք է չորացվեն և օգտագործվեն գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելու, կամ քաղաքային կառուցների համար: Մինչ դեռ այսոր արդեն հայտնի է, որ ճահճային տարածքները բարձրարդյունավետ էկոհամակարգեր են, որոնք ողջ կենդանական աշխարհի համար ճափազանց կարևոր դեր ունեն:

Երբեմն կախված տարվա եղանակից, կամ եղանակի քմահաճույքից, ջրապաշարները կարող են լրիվ վերջանալ, երբ ջրի անհրաժեշտությունը չափազանց շատ է զգացվում, կամ էլ անվերջ տեղալ՝ առաջացնելով աղետալի ջրհեղեղներ, սելավներ՝վտանգելով մարդկանց կյանքը:

Քառցրահամ ջրերի պաշարները ցանկացած երկրի համար ռազմավարական ռեսուրս են:

Դեռ հին ժամանակներից մարդկությունը բնակություն էր հաստատում քաղցրահամ ջրերի հարևանությամբ: Մեծ գետերի ավազանները առաջին հերթին էին բնակեցվում: Իսկ երբ բնակավայրերը զարգանում էին ու հեռանում ջրի հիմնական աղբյուրից, մարդիկ ջուրը մոտեցնում էին իրենց կացարաններին, կառուցելով ջրանցքներ կամ ջրատարներ: Այնուհետև մարդիկ ջուրը սկսեցին հավաքել ջրամբարներում:

Այնուհետև էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով կառուցվեցին հիդրոէլեկտրակայաններ, անբարտակներ:

Մարդն օգտագործում է ջուրը, ինքն էլ այն աղտոտում: Չեն օգնում նաև մաքրող սարքավորումները: Ավելին, ջրի վարակազերծման համար օգտագործվում են աղտահանիչ նյութեր, որոնք իրենց հերթին փոխում են ջրի որակը: Մաքուր ջրի հիմնախնդիրը՝ համամոլորակային է: Հավանաբար ջրի մեծ պաշարներ ունեցող երկրները հարստանալու ավելի մեծ հեռանկար ունեն, քան այն երկրները, որոնք ունեն նավթի և գազի պաշարներ: Բանն այն է, որ արդեն վաղուց մաքուր խմելու ջուրը շատ երկրների, այդ թվում և Հայաստանի շուկաներում հանրաճանաչ ամենատարածված սննդային մթերքներից է:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Հայաստանում բնապահպանական համապատասխան քաղաքականություն իրականացվում է համապատասխան իրավական ակտերի և ծրագրերի միջոցով, այդ թվում՝

1) Օրենքների՝ ա. <> (ընդունված է 1995 թվականի նոյեմբերի 20-ին),

բ.Սևանա լճի մասին>> (ընդունված է 2001 թվականի մայիսի 15-ին),

գ.<> (ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 14-ին),

դ.<> (ընդունված է 2002 թվականի հուլիսի 10-ին),

ե.<> (ընդունված է 2005 թվականի մայիսի 3-ին),

զ.<> (ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին),

է. <> (ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին) և այլն,

2) ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ծրագրեր՝

ա. Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիր (1998թ.),
բ. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր (2002թ.)

գ. Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական ռազմավարության և ազգային գործողությունների ծրագիր (2002թ.),

դ. Ապօրինի անտառհատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիր (2004թ.),

ե. Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման հայեցակարգ (2004թ.),11

զ. ՀՀ շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի հայեցակարգ (2006թ.),

է. ՀՀ Ջրի ազգային ծրագիր (2006թ.),

ը. ՀՀ շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011 թվականների ծրագիր (2007թ.)

թ. Շրջակա միջավայրի պահպանության Ազգային գործողությունների 2-րդ ծրագիր (2008

ժ. Կայուն Զարգացման ծրագիր (2008 թ.),

ժա. ՀՀ բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագրեր (2009թ.),

ժբ. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգի հզորությունների ամրապնդման 2010-2013 թվականների ծրագիր, (2009թ.),

ժգ. ՀՀ կենդանական և բուսական աշխարհի պետական կադաստրի զարգացման 2010-2015 թվականների համալիր ծրագրերը (2009թ.),

ժդ. Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիր (2010թ.),

ժե. Մի շարք բնապահպանական Կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին (2011թ.),.

Չնայած, որ գործողությունների ծրագրավորման մասով առաջընթացն ակնհայտ և տեսանելի է, սակայն պետք է նշել, որ իրականացվող քաղաքականության արդյունավետությունը դեռևս բավարար չի կարող գնահատվել ներքոհիշյալ նկատառումներով՝

1) չնայած Հայաստանն աստիճանաբար հրաժարվում է "Այժմ աղտոտիր, կմաքրենք հետագայում" սկզբունքից, սակայն այդ զարգացումները՝ պայմանավորված սոցիալքաղաքական իրավիճակով, խիստ դանդաղ են կատարվում և գործնականում բնապահպանությունը դեռեւս գերակա չի համարվում:

2) այդ ծրագրերի հիմնական մասը ոլորտային բնույթ ունեն և չեն պարունակում ռազմավարական պլանավորման հիմնական տարրերը: Ավելին, գոյություն ունեցող ծրագրերի հիմնական մասը ներդաշնակեցված չեն թե՞ պետական ռազմավարական զարգացման ծրագրերի հետ, բացակայում են բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման իրավական հիմքերը: Այդ ծրագրերի մշակմանը և իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի մասնակցությունն անբավարար է և դրանց ներգրավումը ռազմավարական պլանավորման գործընթացում պատշաճ կերպով չի իրականացվում: Բացակայում է վերոգրյալ ծրագրերի իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգը՝ դրանք մշակողների և իրականացնողների պատասխանատվությունը հաշվետվողականությունը ապահովելու, ինչպես նաև այդ փաստաթղթերի թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովելու գործում:

Հետազոտական աշխատանքում անդրադարձ ենք կատարել Հայաստանի բնապահպանության մի քանի կարևոր հիմնահարցերի և հիմնախնդիրների:

1.Սևանա լճի հիմնահարցը: Սևանը ՀՀ ամենամեծ լիճն է,միևնույն ժամանակ աշխարհի ամենամեծ քաղցրահամ բարձրալեռնային լճերից մեկը: Այն գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, ընդարձակ գոգավորության մեջ, ծովի մակարդակից շուրջ 1900մ բարձրության վրա և շևջապատված է գրեթե 400կմ երկարությամբ ձգվող լեռնաշղթաներով: Աշխարհում տասնյակ հազարավոր լճեր կան, որոնցից և ոչ մեկը չունի այն առանձնահատկությունը, որ ունի Սևանը: Եթե բարեխառն գոտու լճերում մթնոլորտային տեղումների քանակը գերազանցում է գոլորշիացմանը,ապա բոլորովին այլ է պատկերը արևադարձային և մերձարևադարձային լայնություններում: Սևանա լիճը , ինչպես և ամբողջ Հայկական լեռնաշխարհը, գտնվում է անապատների ու կիսաանապատների գոտում: Այդ լայնություններում Սևանը միակ լիճը չէ. այստեղ են գտնվում Վանա և Ուրմիա լճերը, Մեռյալ ծովը, բայց դրանց բոլորի ջրերը աղի են և պիտանի չեն խմելու կամ ոռոգման համար:

Սևանա լճի դարավոր պաշարների օգտագործումը կարևոր դեր ունեցավ մի կողմից հանրապետության տնտեսության, էներգետիկայի,արդյունաբերության և առհասարակ ժողովրդական տնտեսության զարգացման մեջ :

Անցած տասնամյակների ընթացքում Սևանի էկոլոգիական պատկերը հետընթաց է ապրել նաև հետյևալ գործոնների ազդեցությամբ.

- Ջրի մակարդակի նվազում,
- Շրջապատի բնակավայրերի կեղտաջրերի ներհոսք լիճ,
- Սննդարար տարրերի ներհոսք,
- Մարդու գործունեության վնասակար ազդեցությունը լճի կենսաբազմազանության վրա:

Սևանա լճի ջրի դարավոր պաշարների անտնտեսվար օգտագործումը և ջրի մակարդակի մոտավորապես 20մետրով իջեցումը խիստ բացասական հետևանքներ ունեցան: Խորության և ծավալի փոքրացման արդյունքում խախտվեց լճի էկոլոգիական հավասարակշռությունը, ջերմային ռեժիմը, մի քանի անգամ պակասեց թթվածնի պարունակությունը ջրում, ստեղծելով անբարենպաստ էնդեմիկ ձկնատեսակների մասնավորապես Իշխանի երկու ենթատեսակների բազմացման համար:

Նույն ճակատագիրն է սպասվում մյուս երկու ենթատեսակներին՝ ամառային իշխանին և գեղարքունուն, քանի որ թափ առած ձկնագողության, ձվադրավայրեր

հանդիսացող գետերի ջրօգտագործման և աղտոտվածության պատճառով լճում դրանց քանակությունը չափազանց նվազել է:

Նույն պատճառով արագ տեմպերով պակասում է նաև Սևանի կողակի և բեղլուի քանակը:

2. Անտառահատում: Անտառը բարդ էկոհամակարգ է, որտեղ ապրում են բույսեր, կենդանիներ, մանրէներ, ազդելով ինչպես միմյանց,այպես էլ շրջակա միջավայրի վրա: Այդ էկոհամակարգիթեկուզ մեկ օղակի ոչնչացումը կարող է մեծ վնաս հասցնել: Սակայն անտառի ոչնչացման դեպքում ոչնչանում է ողջ անտառաշխարհը, որը հենց մարդու բնական մրջավայրն է:

Անտառի բարերար ազդեցությունը շջապատի վրա մեծ է և բազմազան: Անտառն արեգակնային էներգիայի կուտակման մարդկոց է: Անտառի պաշտպանական դերը հատկապես նշանակալ է լեռնային երկրներում, և այդ դերը հողը էռոզիայից պահպանելն է:

Հայաստանում անտառի վիճակը մասնագետները աղետալի են համարում: Համաձայն «Հայաստանի անտառներ» հասարակական կազմակերպության տվյալների՝ Հայաստանում անտառահատումները շարունակվում են՝ հասնելով աղետալի ծավալների: Անտառների կորուստը առաջացնում է տնտեսական և սոցիալական խնդիրներ, որոնց թվում են հողերի վտանգավոր չափերի հասնող էրոզիան, սելավները և սողանքները, տեղանքի կլիմայի փոփոխությունը, հողերի բերրիության անկումը, բերքատվության նվազումը, կենսաբազմանության կորուստը, աղտոտված օդը և այլն: Թեև Հայաստանում անտառահատումների մեծ ծավալները գրանցվել են 1992-1995թթ. էներգետիկ ճգնաժամի տարիներին, սակայն այսօր էլ հատումները և անտառածածկ տարածքների կրճատումը շարունակվում է՝ հասնելով մտահոգիչ ծավալների: Այժմ անտառահատումները կատարվում են էժան վառելիքի մեծ պահանջարկի և անտառային անկատար օրենսդրության պատճառով: Նաև պետք է հաշվի առնել կոռուպցիան, ապօրինի հատումները և անհամապատասխան անտառային քաղաքականությունը: Համաշխարհային Բանկի հաշվարկների համաձայն, եթե հատումները շարունակվեն այս ծավալներով, ապա 20 տարի անց Հայաստանում անտառները կվերանան:

20-րդ դարի սկզբին Հայաստանի տարածքի 25 տոկոսը անտառածածկ էր:

Այժմ այն հասելէ 8-9 տոկոսի: Ըստ «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի տնօրեն Նազելի Վարդանյանի տրամադրած տվյալների, որը նա ներկայացրեց հունիսի 21-22-ին տեղի ունեցած «Հայաստանի անտառային ոլորտը. Իրավիճակի վերլուծություն, խնդիրներ, լուծումներ» լրագրողական դասընթացի ընթացքում,

Հայաստանում տարեկան օգտագործվում է 500 000 մ3 փայտ միայն որպես վառելիք, այսինքն միայն այս նպատակով ամեն տարի հատվում է 4 000 հա անտառ, չհաշված այլ նպատակներով փայտի օգտագործումը: Մեկ շնչին բաժին ընկնող անտառային տարածքը Հայաստանում ընդամենը 0,1 հա է, այն դեպքում, երբ ԱՊՀ երկրներում այդ ցուցանիշը 27 անգամ ավելի է՝ 2,7 հա:

Մեկ այլ խնդիր էլ նաև այն է, որ փոքր է Հայաստանի անտառների խտությունը: 1993թ-ի հաշվառման տվյալներով մեկ հեկտարին բաժին ընկնող անտառային ծավալը 125 մա է, որը պահանջվող ծավալի կեսն է: Միևնույն ժամանակ, Հայաստանի անտառների միջին խտությունը 0,52 է: Սա այն սահմանն է, երբ անտառը կարող է կորցնել իր ինքնավերականգնման հատկությունը:

«Հայաստանի անտառներ» ՀԿ-ն, ստեղծված իրավիճակը շտկելու համար, առաջարկում է առաջին հերթին նվազեցնել բնակչության շրջանում փայտանյութի պահանջարկը՝ առաջարկելով մատչելի այլընտրանք, օրինակ բնական գազի մատակարարում, վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացում: Այս գործընթացը կհանգեցնի տարեկան հատվող փայտանյութի քանակի նվազեցման: Ի հավելումն վերջինիս, պետք է մշակել և կիրառել անտառների կայուն կառավարման ազգային ծրագիր, որը կօգնի ընդարձակել Հայաստանի անտառային տարածքը:

ՀԿ-ն առաջարկում է նաև անհրաժեշտ այլ քայլեր, որոնց թվում են.

- Անտառվերականգնում, մեծածավալ ծառատունկերի իրականացում՝ երաշխավորելով դրանց հետագա զոյատևումը
- Կոճղաշիվային վերակազնման աշխատանքներ
- Օրենսդրական բարեփոխումներ՝ անտառների արդյունավետ պահպանման համար
- Օրենսդրության կիրառման մեխանիզմների մշակում՝ արդյունավետ անտառկառավարման համար
- Ուսումնասիրություններ և մոնիտորինգ՝ արդյունավետ կառավարման և հասարակության մասնակցության ապահովման համար
- Հասարակական իրազեկության բարձրացմանն ու կրթությանն ուղղված աշխատանքներ

3.Կենդանական և բուսական աշխարհի ոչնչացումը: Արարատի մարզը «առաջատար» է ՀՀ կենդանիների կարմիր գրքում հայտնված տեսակների ընդհանուր թվով՝ 143: Հաջորդում են Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը՝122 և 104 տեսակ համապատասխանաբար: Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում ընդգրկվել են անողնաշար կենդանիների 155 և ողնաշարավոր կենդանիների 153 տեսակ: Այս մասին նշված է «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բագավառներում ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր» փաստաթղթում:

Նույն ծրագրի տվյալներով Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվով առաջինը Սյունիքի մարզն է՝186 տեսակ, իսկ ամենաքիչ վտանգված տեսակները Արմավիրի մարզում են՝ 26 տեսակ:Անոթավոր բույսերը ՀՀ ֆլորայում ներկայացված են շուրջ 3800 տեսակով: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ֆլորայի կազմում առկա է 142 էնդեմիկ տեսակ (ամբողջ ֆլորայի 3.8 %-ը):

Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում ընդգրկվել են անոթավոր բույսերի 452 տեսակ (Հայաստանի Հանրապետության ֆլորայի 11.89 %), սնկերի՝ 40 տեսակ (ՀայաստանիՀանրապետության բիոտայի 1.05 %):

4.Ավտոտրանսպորտի վնասակար արտանետումները: Ավտոտրանսպորտի վնասակար արտանետումներից մթնոլորտի աղտոտվածության նվազեցումն ամենաբարդ բնապահպանական խնդիրներից է ողջ աշխարհում, և բնորոշ է բոլոր մեծ քաղաքներին: Բացառություն չէ նաև Երևանը: Հիմնախնդրի կարևորությունը պայմանավորված է մի կողմից մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությամբ, մյուս կողմից՝ այդ աղտոտվածության մեջ ավտոտրանսպորտային արտանետումների մեծ ներդրմամբ:

Խնդրի բարդությունը մասնավորապես պայմանավորված է նրանով, որ այն ածանցյալ է տնտեսական գործունեության տարբեր ոլորտների, ինչպիսիք են՝ քաղաքաշինությունը, ճանապարհաշինությունը, տրանսպորտը, երթևեկության կազմակերպումը և այլն: Այս ասպարեզներում մշակվող և իրականացվող ցանկացած քաղաքականություն և ռազմավարություն պետք է համահունչ լինի շրջակա միջավայրի և մարդկանց առողջության պահպանության հիմնախնդրին:

Մթնոլորտի պահպանության բնագավառի քաղաքականությունը սերտորեն առնչվում է տրանսպորտի բնագավառի քաղաքականությանը: Քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը շարժական աղբյուրներից, տրանսպորտի գործունեության հարակից արդյունքն է: Տրանսպորտի գործունեությունը էական նշանակություն ունի քաղաքի տնտեսության և նրա բնակիչների բարեկեցության համար: Բնապահպանական խնդիրները կարևոր են, սակայն հանդիսանում են քաղաքային տրանսպորտի քաղաքականության ասպեկտներից միայն մեկը, ի թիվս տնտեսական, ֆինանսական, սոցիալական և այլ ասպեկտների: Հարցի այս տարբեր կողմերը պետք է հավասարակշռված լինեն տեղական և ազգային մակարդակով՝ քաղաքականություն մշակելիս:

Մթնոլորտի աղտոտվածության մեջ ավտոտրանսպորտի բաժնեմասն անհամեմատ մեծ է նաև այն պատճառով, որ կազմակերպությունների արտանետման կազմակերպված, բարձ աղբյուրների (խողովակների) համեմատությամբ ավտոմեքենաների արտանետումները կատարվում են գրեթե շնչառության մակարդակի բարձրության վրա և կուտակվում մթնոլորտի գետնամերձ շերտում քաղաքի ողջ տարածքում:

Ներկայումս գոյություն ունեցող ելքային տվյալների հիման վրա անհնար է իրականացնել ավտոտրանսպորտային արտանետումների ճշգրիտ հաշվառում և տարանջատել դրանք ըստ մարզերի և բնակավայրերի:

Այս ասպարեզում առկա իրավիճակը կարելի է բնորոշել որպես ոչ հեռանկարային և ռազմավարական (հիմնարար) լուծումներ պահանջող: Ստեղծվել է կիսաքաոսային մի իրավիճակ, երբ ներքաղաքային ուղևորափոխադրումներից գրեթե ամբողջովին դուրս են մղվել մեծ և միջին մեծության ավտոբուսները և դրանց տեղը գրավել են միկրոավտոբուսները: Առկա է վերգետնյա էլեկտրատրանսպորտի կրճատման տենդենց, մասնավորապես, դադարեցվել է տրամվայների շահագործումը: Մեծ քանակությամբ միկրոավտոբուսները խոչընդոտում են նաև նորմալ երթևեկությանը, հաճախակի առաջացնելով խցանումներ, ինչն իր հերթին բերում է ավտոտրանսպորտային արտանետումների աճի:

Էլեկտրատրանսպորտի զարգացումը ավտոտրանսպորտային արտանետումների նվազեցման ամենաազդեցիկ միջոցներից է: Դրա գործունեության համար պահանջվող էլեկտրաէներգիայի արտադրության հետևանքով առաջացած աղտոտվածությունը քաղաքում աննշան է ոչ էլեկտրական տրանսպորտի առաջացրած աղտոտվածության համեմատ: Մյուս կողմից էլեկտրատրանսպորտի փոխադրամիջոցները (մետրո, տրոլեյբուս, տրամվայ) որպես կանոն ունեն մեծ տարողունակություն և դրանց նորմալ շահագործումը կհանգեցնի նաև օգտագործվող ավտոմեքենաների քանակության կրճատման, որն իր հերթին նույնպես կբերի արտանետումների կրճատման:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի թեման ենթարկելով համակողմանի ուսումնասիրության՝ հանգել ենք այն եզրակացություններին, որ բնության վրա մարդու ներգործության ձևերն ու ծավալները իրենց որակական և քանակական բնութագրումներով այսօր համամոլորակային նշանակություն են ձեռք բերել:

Այդ առումով անհրաժեշտ են կրթության նկատմամբ սկզբունքորեն նոր մոտեցումների առաջադրումը, ինչպես նաև աշակերտների մոտ ձևավորել սեր և հարգանք բնության նկատմամբ: Առաջնային խնդիր է համարվում առողջ և ներդաշնակ հասարակություն կրթելն ու դաստիարակելը:

Ծանոթացնելով խնդիրների հետ բախման հետևանքով տեղի ունեցող արդյունքներին, աշակերտը պետք է կատարի հետևություն և զերծ մնա բնությանը վնաս պատճառող արարքներից: Առաջին հերթին պետք է գիտակցեն, որ բնությունը մի տուն է, առանց որի կյանք գոյություն չունի: Այն հանդիսանում է բնօրրան. ուստի ինչպես քո տունը,

այնպես էլ բնությունը պետք է ամուր և մաքուր պահել: Օրինակ՝ ծառեր տնկելով մենք կապահովենք շրջակա միջավայրի մաքրությունը, ինչպես նաև մեր կյանքի բարեկեցությունը: Ակնհայտ է, որ բնապահպանության բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրության, կենսաբանության, էկոլոգիայի, հասարակագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի, սոցոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Կրտսեր դպրոցականների դիտողականությունը կարելի է զարգացնել ուշադրության, հիշողության ակտիվացման տարբեր հնարների օգնությամբ՝ դիտել բույսերը, կենդանիները, նրանց կառուցվածքը, համեմատել, գտնել ընդհանուր գծերը, առանձնահատկությունները: Ուսուցիչը կարող է նախապատրաստել առաջադրանքներ, որտեղ ոչ ամբողջական ներկայացված է որևէ բույս, կամ կենդանի և հանձնարարել գտնել ու լրացնել բաց թողնված տարրերը:Այս բնույթի առաջադրանքները հնարավորություն կտան պարզելու սովորողների հիշողության, ուշադրության ծավալը, խորությունը:

Ուսումնասիրության նպատակն է ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, գրտելիքներ հաղորդել բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ:

Գրականության ցանկ

1.Ազգային զեկույց, Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002թվականին, ՀՀ Բնապահպանության նախարարություն, Երևան, 2003

2.<<Փոփոխվող օզոնային շերտը>>, ՅՈՒՆԵՊ, 1995

3.<< Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002թ-ին>>, Ազգային զեկույց

4.<<Հայաստանի կենսաբազմազանություն >>, Առաջին ազգային զեկույց, Երևան, 1999

5.<<Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր>>, Երևան, 1999